

ՀՏԴ՝ 811.19

Ճ ՄԿԶԲՆԱՀՆՉՅՈՒՆՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Զաքարյան

«Տաթև» գիտակրթական համալիր

Բանալի բառեր՝ *հայոց լեզու, ստուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, արմատ, ածանցյալ, ածական, ձայնդարձ, արմատային տարբերակներ, շարժուն s-, սկզբնահնչյուն:*

Սույն հոդվածում առաջարկվում է հայերենի ճ սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մի նոր վարկած, որն է՝ ճ < *sk'h համապատասխանությունը, որտեղ հ.-ե. նախաձևը բաղկացած է շարժուն s- և քմայնացած ու շնչեղացած k հնչյուններից: Այդ վարկածի հիման վրա առաջարկված է ճեղք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, ճողփել, ճողոպրել, ճողոպուր, ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ, ճուռն, ճուռճուռ բառերի ստուգաբանությունը:

Նախաբան. Հ. Աճառյանը հայերեն ճ-ի հնդեվրոպական ծագման վերաբերյալ փաստել է բառավերջի ճ < g²y (g^wy) համապատասխանությունը երեք բառի օրինակով՝ *աճել, աճիւն, լիճ* (ԼՔՀԼ, 535-536): Գ. Ջահուկյանը նույն բառավերջի դիրքի համար ավելացրել է ճ < *d(io) (*լիեճ-եպ, խիճ, խիղճ, շիճ, շոճ* նն) համապատասխանությունը (ՀՄԲ): Նա նաև առաջարկել է բառասկզբի համար ճ < *g համապատասխանությունը միայն երկու արմատի համար՝ *ճվլ-ել, ճնշ-ել* (ՀՄԲ): Ակնհայտորեն այսքանը բավարար չէ հայերենի ճ հնչյունի ծագումը համակողմանիորեն բացատրելու համար: Դրա հետ կապված՝ Է. Աղայանը նկատել է, որ առհասարակ հստակ չէ հայերենի ճ հնչյունի ծագումը (Աղ., 113-115): Նրա այս դիտարկման առիթը Հ. Աճառյանի նկատած (ՀՄԲ, 3, 203-204) *ճիւղ, ճեղ, ճիղ, ճող, ճուղ(ն)* ձայնդարձային շարքի քննարկումն է, որի արդյունքում, շարունակելով Պետերսոնին (ինչպես նաև Վալդեին ու Պոկոռնուն), այդ բառերը կապել է հ.-ե. *(s)k(h)el- «կտրել, ճեղքել» արմատի հետ (նույն տեղում)՝ սակայն առանց հստակեցնելու ճ-ի նախաձևը: Այս եզրահանգումը կարելի է ամրապնդել *ճեղ(ք), ճիղ, ճիւղ և շեղք, շիղ, շիւղ* ձայնդարձային շարքերի գուգահեռությամբ: Իսկ *շեղք*-ը Է. Աղայանը (նաև Գ. Ջահուկյանը) բխեցրել են նույն *(s)k(h)el- «կտրել, ճեղքել» արմատից (Աղ. 126-127, ՀՄԲ, 585): Հ. Աճառյանը

նկատել է նաև դրանց գուգահեռությունը *ծիլ-ծիղ-ծիւղ* շարքի հետ (ՀԱԲ, նույն տեղում):

Ըստ Յ. Պոկոռնու, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ս. Նիկոլյանի ստուգաբանական բառարանների (Պոկ., ՀԱԲ, ՀՄԲ, Նիկ.) տվյալների՝ հ.-ե. բառասկզբի **(s)k'(h)*- հնչյունակապակցություն՝ իր շարժուն (սահող) *s*-ով/առանց *s*-ի¹, շնչեղացած/շնչեղացած, քմայնացած/չքմայնացած *k*-ով տարբերակներով, հայերենում արտացոլվել է հետևյալ համապատասխանություններով:

1. **(s)k > ք* (*քերել, քիւ, քորել, քուրջ, քաղել նն*),
2. **(s)k' > ս* (*սենեակ, սկրթել, սալարիլ նն*),
3. **(s)kh > խ* (*խելք, խել, խիլ, խոր, խուղ, խաւ նն*),
4. **sk > կ* (*կեղել, կոփ, կուրտ, կտել նն*),
5. **sk' > ց* (*ցեղ, ցիր, ցուպ, ցախ, ցլեպ նն*),
6. **skh > շ* (*շիւղ, շերտ, շիւ, շոր, շարշլել նն*):

Այս շարքում բացակայում են **(s)k'h* և **sk'h* կապակցությունները:

Հիմք ընդունելով վերոհիշյալ գուգահեռները՝ կարծում ենք, թե նշված բառերում *ճ*-ի նախաձևը կարող է լինել **sk'h* (շարժուն *s*-ով, քմայնացած ու շնչեղացած *k*-ով) տարբերակը: Ինչ վերաբերում է **(s)k'h* (շարժուն *s*-ի անկումով և քմայնացած ու շնչեղացած *k*-ով) տարբերակին, ապա կարծում ենք՝ դրա հայերեն արտացոլումը կարող է լինել *ծ* սկզբնահնչյունը: Մի այլ առիթով փորձել ենք օրինակներով ու գուգահեռներով փաստարկել ու հիմնավորել **(s)k'h > ծ* վարկածը (Չաք.-3):

Ստորև կփորձենք փաստարկել ու հիմնավորել **sk'h > ճ* վարկածը՝ նկատի ունենալով ոչ միայն *ճիւղ – շիւղ, ճեղ – շեղք*, այլ նաև *ճիւ «ցողուն» – շիւ, ճորճոր – շորոր, ճկ-ոյթ – ծկ-իկ, ճոռ – ծուռ, ճախ – ցախ, ճողճել – ցոլալ, ճուռն – կուռն, ճուռճուռ – կուռկուռ, ճոռ – խոռ, ճզմզել – խզմզել* և նման այլ գուգահեռներ:

Արդյունքում առաջարկվում են մի շարք նոր ստուգաբանություններ կամ ստուգաբանական վերանայումներ ու ճշգրտումներ: Օրինակները հիմնականում հ.-ե. **sek-* «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից սերած բառեր են: Ինչպես հայտնի է, այդ արմատը և դրա՝ սղված, ապա զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված

¹ Շարժուն **s*-ի մասին տե՛ս, օրինակ Աճառյան Հ.Հ., ԼՔՀԼ, 563; **Макаев Э. А.**, *Структура слова в индоевропейских и германских языках*. М., «Наука», 1970, էջ 217-253; **Семереньи О.**, *Введение в сравнительное языкознание*. М., «Прогресс», 1980, էջ 119-120, 108-109; https://ru.wikipedia.org/Закон_Зибса (մարտ, 2019); https://en.wikipedia.org/wiki/Indo-European_s-mobile (մարտ, 2019):

տարբերակները լայն տարածում ու ճյուղավորումներ ունեն դուստր լեզունե-
րում, այդ թվում՝ հայերենում²:

1. *Ճեղք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, ճողփել, ճողոպրել, ճողոպուր*

Նախ՝ Է. Աղայանի մատնանշած *ճեղ(ք), ճիղ, ճիւղ, ճող, ճուղն* շարքի մա-
սին³: Դրանց համար առաջարկում ենք *sk'hel-/*sk'hēl-/*sk'hēul-/*sk'hol-/*sk'hōl-
նախաձևը (<*(s)ke-l- <*sek- «կտրել, ճեղքել»)՝ վանկարար հնչյունի երկար ու
կարճ տարբերակներով, ձայնդարձի տարբեր աստիճաններով: Այս շարքին ան-
շուշտ պետք է ավելացնել *ճաղ*⁴ «1. ձող, 2. կտոր, շերտ» <*sk'həl- բառը՝ որպես
նշված նախաձևի ստորին ձայնդարձի արտահայտություն: Ածանցյալներից
պետք է հիշել *ճղել (ճեղել)* «1. պատռել, ճեղքել, 2. ճողոպրել, փախչել, ծլկել»,
ճողել «1. պոկել, զատել, ճղել, 2. ճյուղ-ճյուղ անել, 3. մազերը փետել, 4. բուրդ
զզել, 5. ձգելով երկարացնել, 6. աղեթափել» և *ճողքել* «բզկտել, փետել, պոկոտել»
բայերը⁵: Այլ ածանցյալներ են՝ *ճղօն* «ճեղքված փայտի կտոր» (Մալխ., 3, 216),
ճղակ «1. ճեղք, 2. պատառաքաղ» (ՀԼԲԲ, 3, 398), *ճղլակ* «երկճղի» (Մալխ., 3, 215),
ճելատ «պոչը կտրած» (Մալխ. 3, 206)՝ *-օն, -ակ, -լակ, -ատ* ածանցներով (հմմտ.
հատ-ակ, սուղ-ակ, կտր-օն, կոճ-օն, քաղ-լակ, մղ-լակ, պոչ-ատ, միջ-ատ և այլն):

Ճոլտել «պոկել, ոլորելով կտրել» (Մալխ., 3, 321) բառը, որ չկա ստուգա-
բանական բառարաններում, ոչ միայն հոմանիշ է, այլև նույնարմատ է *ճղել,*
ճողել, ճողքել բառերին՝ տարբերվելով *-տ-* ածականի առկայությամբ և ուշ
շրջանի *ղ/լ* հերթագայությամբ՝ ճոլտել <*sk'hol-d-:

ճողփել «ջուրը ճեղքել՝ պատռել» բառի *ճողփ* արմատը Հ. Աճառյանը
համարել է բնաձայնություն (ՀԱԲ, 3, 211): Նույնը կրկնել է Գ. Ջահուկյանը (ՀՄԲ,
496): Սակայն այդպիսի տպավորություն թողնում է դրա ածանցյալ *ճողփյուն*
«ջուրը ճեղքելու ձայն» բառը, որը իմաստային հետագա զարգացման արդյունք
է: Իսկ *ճողփ-* արմատի համար պետք է վերականգնել հ.-ե. *sk'ho-l-ph- (<*sek-

² Ածանցյալների այդ հսկա բազմությանը ծանոթանալու համար տե՛ս Պոկ., Նիկ.՝ մասնավորա-
պես *skēn- «կտրել, պոկել», *(s)ken-(d)- «մաշկել, ճեղքել», *(s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կտրել»,
*(s)ker-p- «կաշվի կտոր, կոշիկ», *(s)keu-2, (s)keuə, (s)kū- «ծածկել, թաքցնել, փաթաթել, ծածկոց»,
*(s)keu-l-(kh-) «ծածկ, թաղանթ, կաշի, մորթի», *(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

³ Այս բառերը Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 194, 195, 203-204) և Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 491, 493-494) չեն
ստուգաբանել: Այդ բացը, ինչպես նշված է վերը, մասամբ լրացրել է Է. Աղայանը:

⁴ Այս բառի ստուգաբանության խնդրում տարակարծություն կա: Հ. Աճառյանը համարել է փոխա-
ռություն վրացերենից (ՀԱԲ, 3, 178), իսկ Գ. Ջահուկյանը, իրավացիորեն առարկելով Հ. Աճառյա-
նին («վրացերեն čali-ն համաքարթվելական չէ»), վրացերենի հետ միասին կասկածով հա-մարել
է իրանական փոխառություն՝ սակայն առանց աղբյուր և սկզբնաձև մատնանշելու (ՀՄԲ, 486):

⁵ Սրանք Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 194, 210-211) և Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 491, 495, 496) չեն ստուգաբա-
նել, ընդամենը նշել են դրանց կապը *ճիւղ, ճեղք, ճող* բառերի հետ: Է. Աղայանը չի հիշատակել
ճղել, ճողել, ճողքել բառերը (նույն տեղում), թեև դրանք ինքնըստինքյան ենթադրելի են:

«կտրել, ճեղքել») նախաձևը, որ նախորդներից տարբերվում է միայն –փ- աճականով:

Ճողոպրել «1. փրցնել, խլել, պոկել, 2. փախչելով փրկվել, պրծնել, ծլկել» բառը Հ.Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 3, 211, ՀՄԲ, 496): Մակայն նկատենք այս բառի թե՛ իմաստային, թե՛ ձևային նմանությունը վերոհիշյալ *ճղել* «1. պատռել, ճեղքել, 2. ծլկել, փախչել, անհետանալ» բառին (Մալխ., 3, 215):⁶ Հատկապես կարևոր է սրանց իմաստային զարգացման նույնությունը: Ակնհայտ է, որ սրանք նույնական են նաև ծագմամբ, ուստի *Ճողոպրել*-ի համար պետք է վերականգնել **ճողոպուր-* հիմքը, որ ածանցավոր է՝ *ճողոպուր-*: Արմատի համար կարելի է առաջարկել հ.-ե. **sk'holo-b-* <**sk'ho-l-* նախաձևը: Իսկ –ուր ածանցի համար հմմտ. *թափուր, մրուր, բլուր, բարուր, կտուր* և այլն: Կա նաև *ճլկել* «ծլկել» բառը (Մալխ. 3, 212), որի հիմքը *ճողոպ-* հիմքից տարբերվում է ձայնավորմամբ, աճականով և *ղ/լ* հերթագայությամբ, ուստի *ճլկ-* արմատի համար կարելի է ենթադրել <**ճուլուկ* <**sk'hōlō-g^w*- <**sk'hō-l-* նախաձևը: Իսկ *ծլկել* բառը դրա նույնարմատ տարբերակն է՝ *ծլկ-* <**ճուլուկ* <**(s)k'hōlō-g^w*- <**(s)k'hō-l-* (Ջառ.-3):

Ճողոպուր(տ) «ընկույզ» բառը, որ համանուն է նախորդ բառի հիմքին, Հ.Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (<*ճուրբուրի*)՝ չնայած հնչյունական մեծ տարբերություններին (ՀԱԲ, 3, 211): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀՄԲ, 496), թեև այլ առիթով *կ/ճ* հերթագայությամբ բառազույգերի շարքում նշել է նաև՝ *կաղին/ճողոպուրտ*:⁷ Այս վերջինի տրամաբանությամբ Հ. Մարտիրոսյանը *ճողոպուրտ*-ի համար ենթադրել է **ճեղ-* արմատը և դա բխեցրել հ.-ե. **g^welh²-* «կաղին» նախաձևից⁸, որից ծագած է համարվում նաև *կաղին* բառը (ՀՄԲ, 377): Թեև սա հավանական տեսակետ է, բայց առաջարկում ենք մեկ այլ վարկած: Կարծում ենք, թե *ճողոպուրտ* «ընկույզ» բառի բնիմաստն է «պոկել, փրցնել, ճեղքել, կեղևել», ինչպես որ *պոպոկ* և *կաղաղ* հոմանիշների դեպքում: Ինչպես նշել է Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, 98-99), *պոպոկ*-ի կրկնված արմատը *պոկ-*ն է (որից՝ *պոպոկել* «կեղևել, կճկել»), իսկ *կաղաղ*-ի առաջնային իմաստն է՝ «կեղև»: Խնդիրն այն է, որ ընկույզը հավաքում են այն ժամանակ, երբ նրա կիսաչորացած կանաչ կեղևը դեռ վրան է, այնուհետև պո-

⁶ Նույնպիսի իմաստային զարգացում է առկա ռուս. *удрать* «ծլկել, ճողոպրել, փախչել» բառում, որը *драть* «պատառոտել, ճղճղել, քերթել, պոկել, փրցնել» բառի ածանցյալն է (ՎԲՌ): Նույնը՝ անգլ. *lat* «ջարդել, ծեծել» բառը, որ ունի նաև «փախչել, ծլկել, ճողոպրել» իմաստը (ՎԲԱ):

⁷ Տե՛ս *Джаукян Г.Б., Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ե., Изд-во АН Арм ССР, 1967, стр. 167:

⁸ Տե՛ս *Martirosyan H.K., Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008, p. 98-99.

կում են այդ կանաչ կեղևը, ավելի ուշ ճեղքում են չոր կեղևը և հանում միջուկը: Կարելի է կարծել նաև, որ *ճողոպուր* «ճողվող, ճեղքելի» կոչվել է դյուրաբեկ կեղևով, հեշտ կոտրվող, դյուրին ճեղքվող ընկույզը: Հիշենք, որ հայերենում՝ *ընկույզ* բառի հոմանիշների կամ ընկույզի ածականների շարքում տարբեր բառեր կան, որոնք նշում են ընկույզի հեշտ կամ դժվար կոտրվող կամ միջուկը հեշտ կամ դժվար դուրս եկող լինելու հատկանիշը: Օրինակ՝ *կռու (կռո)* «դժվար կոտրվող», *կրկիտ* «միջուկը դժվար դուրս եկող», *կցիպ (քցիպ)* «կռու», *խեճեճ* «բարակ՝ դյուրաբեկ կեղևով»: Հետևաբար *ճողոպուր* «ընկույզ» բառի համար հնարավոր է նույն ստուգաբանությունը, ինչ *ճողոպրել* բառի հիմքի համար: Իսկ *ճողոպուրտ* տարբերակի **տ** վերջնահնչյունը հայերենի նաև գրային շրջանին բնորոշ ածական է (հմմտ. *Լաստիվերտ, շրեշտ, ճուլպանտ* ևն) և բանավոր խոսքում կցվում է անգամ փոխառյալ բառերին (*կռանտ, կալբաստ, ալմաստ, փարդախտ* ևն): Ի դեպ, ոչ միայն վերոհիշյալ *կաղաղ*, այլև *կակալ* «ընկույզ» բառերի կրկնված *կաղ-կալ-* արմատը ակնհայտորեն կապված է *կեղև (կլեպ)* [*<*(s)kel-eb-* «կտրել, անջատել»] (ՀՄԲ, 398) բառի հետ: Մնում է պարզել դրանց առնչությունը *կաղին-*ի հետ:

2. Ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ

Նշված հ.-ե. **sek-* արմատի իմաստային զարգացումների թվում կան ոչ միայն «կտրել, հատել, ճեղքել» իմաստով, այլև դրանից ճյուղավորված «կտոր, բեկոր, մաս, հատված» իմաստով բառեր: Դրանցից հիշենք *ցախ* «կտրտած վառելափայտ» [*<*skʰ-eko-* «ճյուղ»] (ՀՄԲ, 4, 446-447)⁹, *խրխոր* «1. փշուր, մանր կտոր, չնչին բան, 2. փուխր» [*<խոր-խոր <*(s)khor-*՝ կրկնությամբ] (ՀՄԲ, 355), *խշուր* «կտորտանք, խոփվ, փշուր, մանրուք, տաշեղ» [*<*(s)khō-sk-h-*ուր] (Զաք.-2, 86), *կրկուտ* «փայտի կտորտանք, խոփվ» *<կուր-կուր-տ <*(s)kō-r-*] (Զաք.-2, 89), իռլ. *cert* «մանր, փոքր», հ.անգլ. *sceard* «փշուր» (Պոկ, 938-947), ցելուկ «ճեղքել, պատռել» (ՀՄԲ, 4, 542), ռուս. *щель* «ճեղք», անգլ. *shilling* «մանրադրամ», հուն. **σκάλλω** «փորում եմ», լիտվ. *skėlti, skeliù* «ճեղքել», ռուս. *осκόлок* «բեկոր», իւեթ. *iškallāi-* «կտրել» (ՎԲՌ, щель), *խզել (խուզ)* «պոկել, կտրել» [*<*(s)khu-gʰ-*] (ՀՄԲ, 328), *խիզար* «կտրիչ, մեծ սղոց» [*<*(s)khēi-gʰ-*] (ՀՄԲ, 329), *խրամ* «փոս, առու, ճեղք» [*<*(s)khrəm-*] (ՀՄԲ, 354), *ցլեպ (ցլեփ)* «փոքր սրածայր բեկոր» [*<*skʰ(ē)leb-*] (ՀԼՊ ՆԺ, 148), *կոտոր/կտոր/կտրել* «հատել» [*<*sko-t-*] (Զաք.-1, 89-90), *քարթ*

⁹ Այս բառի նախաձևը ներկայացնում ենք ըստ Պետերսոնի (տե՛ս ՀՄԲ, նույն տեղում): Հ. Աճառյանի նշած **kʰākā-* (ըստ Բարթոլոմեի) և Գ. Ջահուկյանի առաջարկած **kʰāk-* (ՀՄԲ, 741) տարբերակները հարմար չեն, քանի որ հ.-ե. **kʰ-*ն հայերենում դառնում է ոչ թե **ց**, այլ **ս**: Ասվածին համահունչ է *ցաքատ* «ճյուղ կտրելու գործիք» [*<*skʰak-*] (ՀԼՊ ՆԺ, 130) ստուգաբանությունը (*ցաք-* և *ցախ* արմատները Հ. Աճառյանը համարել է տարբերակներ (ՀՄԲ, 4, 446-447):

(*քառթ*) «խազ, կտրվածք, քերծվածք» [$\langle * \rangle$ (s)kær-t-] (Չաք.-1, 90)¹⁰ բառերը: Այս շարքին կարելի է ավելացնել հետևյալ բառերը, որոնք ներկայացնում են «ճեղք» և «կտոր, բեկոր, հատված» իմաստներն ու դրանց հետագա զարգացումները:

Ճաք «փոքր ճեղք» բառը (Մալխ., 3, 205) չկա ստուգաբանական բառարաններում: Հոմանիշ է վերոհիշյալ *ճեղք* բառին, որի հ.-ե. արմատն է *sk'hē- ($\langle * \rangle$ sek- «կտրել, ճեղքել»)՝ *1 աճականով: Ճաք բառի դեպքում առկա է նույն արմատը՝ այլ ձայնավորմամբ և այլ աճականով՝ *sk'hə-k-: Նույն արմատի մեկ այլ ածանցյալ է *քերծել* [$\langle * \rangle$ (s)ker-g'-] բառը (ՀԱԲ, 4, 573): Կարելի է հիշել նաև *խոր-խորել* «հողը չորանալուց ճաքճքել» բառը, որի արմատն է՝ *խոր* $\langle * \rangle$ kho-r- «կտրել» (հնչյունափոխված կրկնությամբ) (ՀՄԲ, 343) (կազմության համար հմմտ. *խար-խլել, շարշլել*):

Ճաթել «ճաքել» (Մալխ., 3, 190) բառը, որ չկա ստուգաբանական բառարաններում, նույնարմատ է *ճաք* բառին՝ այլ աճականով՝ *ճաթել* $\langle * \rangle$ sk'hə-t-: Այդ նախաձևի իմաստային մեկ այլ զարգացում է *ճաթ* «պատառոտված շոր, ցնցոտի, քուրջ» (Մալխ., 3, 190) բառը:

Ճախ (*ճեխ*) «1. մանր ցախ, խոփվ, կրկուտ, 2. սարի, 3. լայն, ճողված (բերան)» բառը (Մալխ., 3, 190, 206), որ չկա ստուգաբանական բառարաններում, տարածված է բարբառներում և հոմանիշ է վերոհիշյալ *ցախ* բառին: Այս նույն-իմաստ բառերի ձևային նմանությունն այնքան մեծ է, որ մնում է ենթադրել դրանց նույնարմատ լինելը՝ *ճախ* $\langle * \rangle$ sk'hə-kh-: Նկատենք, որ նույն նախաձևի այլ տարբերակներից են սերել վերոհիշյալ *խշուր, կրկուտ* հոմանիշները: Հիշենք նաև *ճախավել* – *ցախավել* նույնանիշները (Մալխ., 3, 190): Ինչ վերաբերում է *ճախի-ի խոփ* հոմանիշին, ապա Գ. Ջահուկյանը դրա համար ենթադրել է հ.-ե. $\langle * \rangle$ (s)krēbh- «ձեղ, կծկվել» նախաձևը (ՀՄԲ, 351): Սակայն իմաստից ելնելով՝ կարծում ենք, թե ավելի կպատշաճեր համանուն $\langle * \rangle$ (s)khrē-bh- (կամ $\langle * \rangle$ (s)khrē-p-) «կտրել, ճեղքել» նախաձևը, որ նախորդ բառերի նախաձևերի մի տարբերակն է: Դրա նույնարմատ մեկ այլ տարբերակ է *խոփկ* «խոփվ, խուշուր» (Մալխ. 2, 303) բառը [$\langle * \rangle$ (s)khrē-g-]: Անշուշտ, նույն հ.-ե. արմատից են *խոփնձ* «չորացած՝ խանձված՝ խոփվ դարձած բույս» և *խոնձվել* «խճճվել, թնջկել» (Մալխ. 2, 303) բառերը [$\langle * \rangle$ (s)khrē-n-g'h-]:

Ճակ «կտոր, փերթ, շառաշիղ» արմատը Հ. Աճառյանը դուրս է բերել *աղուճակ* «աղի մեծ կտոր» բառից¹¹ (ՀԱԲ, 3, 175): Գ. Ջահուկյանը ենթադրել է, որ *ճակ*-ը փոխառություն է անստույգ աղբյուրից (ՀՄԲ, 485): Սակայն այս բառի

¹⁰ Տե՛ս նաև Միմոնյան Ն. Մ., *Ստուգաբանական դիտարկումներ* // «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», 2016, հմ. 1, էջ 26-32:

¹¹ Այս բառի ու ձայնավորի համար հմմտ. *աղուփոխ* «բարեկամությունը նենգող» բառը (ՀԱԲ, 1, 115)՝ նույն աղ բաղադրիչով:

թե՛ ձևը, թե՛ իմաստը հուշում են, որ նա նույնարմատ է նախորդ բառերին՝ աճականի տարբերությամբ՝ *ճակ* <*sk'hə-g-: Ի դեպ, աղուճակ-ի հոմանիշն է անհայտ ծագման համարված *շառաշիղ* (*շառաշեղ*) «աղի մեծ կտոր» (ՀԱԲ, 3, 496, ՀՄԲ, 581) բառը: Սա ըստ երևույթին բարդ բառ է, որի *շառ-* և *շիղ* բաղադրիչները կարելի է համարել հ.-ե. վերոհիշյալ *sek- «կտրել, ճեղքել» արմատի տարբերակված ածանցյալների հոմանիշ ժառանգներ՝ «կտոր» իմաստով՝ *շառ-* <*skhə-r-so- և *շիղ* <*skhē-l-, այսինքն՝ ունենք արմատի տարբերակներով կազմված յուրատեսակ կրկնավոր (հմմտ. բարձրաբերձ, աղջամուղջ, տարտամ և այլն): Սրանց նույնարմատ մեկ այլ հոմանիշ է շերտ «տափակ կտոր» [<*skhe-r-d-] բառը (ՀՄԲ, 586):

Ճի «1. մաս, կտոր, 2. վերջույթ (թև, ճուռ, ոտք, կճղակ, սմբակ, ամորձիք), 3. թռչուն, 4. ցողուն, 5. ականջօղի կանթ, վզնոցի կեռիկ, 6. ընկույզի կճեպ» (ՀԼԲԲ, 3, 390, Մալիս. 3, 211, ՀԱԲ, 3, 202, ՀՄԲ, 493) բառը մինչ այժմ համարվել է անհայտ ծագման: Դրանից են կազմված *ճիվ-ճիվ անել* «կտոր-կտոր անել, մասնատել, հոշոտել», *ճվոն-ճվոն* «ճիվ-ճիվ բաժանած, ճվատած, բզկտած» հարադրությունները, *ճվատել* (*ճուատել, ճվտել*) «1. քաշելով պոկել, 2. փետրել, 3. ճեղքել, ճաքեցնել», *ճվտկել* «ծառի ճյուղերը կտրտել, էտել» և այլ ածանցյալներ: Առաջարկում ենք այս *ճի* արմատը ևս կապել նախորդների հետ՝ այլ աճականով՝ *ճի* <*sk'hē-p-: Որպես հիմնավորում նկատենք, որ այս արմատի ու նրա ածանցյալների այս կամ այն իմաստային զարգացմանը գուցահետ են նույն նախաձևի այլ տարբերակներից սերած *շի* «ղալար ճյուղ, շյուղ» [*skhē-p-] (ՀՄԲ, 588-589), *շիղ* (*շեղ, շիւղ*) «շիվ, դալար ճյուղ» [*skhē-l-] (ՀՄԲ, 587), *ճիւղ* «1. ոստ, 2. մաս, կտոր, բաժին, հատված, 3. վտակ, 4. կողմ, թև, 5. բնագավառ, ուղղություն, գիծ» [*sk'hēu-l-] (տե՛ս վերը), *ծիւղ* (*ծիղ, ծիլ, ծեղ*) «ընձյուղ, շյուղ, ցողուն» [(s)k'hēu-l-] (Չաք.-3), *խեղբ* (*խիղբ*) «ծիլ, ընձյուղ» [<*khe-l-p-] (ՀՄԲ, 326), *ցավատ* «ծվեն, պատառ» [*skəu-a-t] (ՀՄԲ, 742), *կեղեւ* (*կեղեք, կլեպ, քեղեփ*) [*kel-eb(h)-կամ *kel-ep(h)-] (ՀՄԲ, 398), *ցիտ* «բզկտված, պատառոտված» [<*sk'id-] (ՀՄԲ, 4, 455-456), *քաղել* «պոկել» [<*(s)k|-] (ՀՄԲ, 4, 541-542), *շորթել* «խլել, կորզել, հափշտակել» [*skhort-] (ՀՄԲ, 593), *շարշլել* «պատառոտել» [*skhər-՝ հնչյունափոխված կրկնությամբ] (ՀՄԲ, 583) և այլ բառեր: Այս բառերի հղումներով կարելի է գտնել նաև մի շարք այլալեզու գուցահետներ, որ չենք կրկնում տեղի սղության պատճառով:

3. *Ճուռն, ճուռճուռ*

Այս խմբի բառերի ընդհանուր իմաստն է «թև»:

Ճուռն «1. կուռ, թև, ոտք» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 3, 214, ՀՄԲ, 497): Նկատի ունենալով *ճի* բառի հետ իմաստային ընդհանրությունը («1. թև, 2. ոտք»)՝ ենթադրում ենք, որ դրանք նաև

հ.-ե. նախաձևի արմատով են ընդհանուր՝ տարբերվելով ձայնավորմամբ և աճականներով՝ <*sk'hōr-s-no- <*sk'he-r- (<*sek-): Իր հիմնական իմաստով այս բառի հոմանիշն է *կուռն* «1. թև, 2. ուսահող, 3. կողք, 4. կոնակ, մեջք, թիկունք, 5. կրունկ» բառը: Հետևելով Յ. Պոկոռնուն՝ Գ. Ջահուկյանը սա բխեցրել է հ.-ե. *gur-no-s-՝ *geu- «ծռել, կամար կազմել» նախաձևից (ՀՄԲ, 428), որը Հ. Աճառյանը չի ընդունել (ՀՄԲ, 2, 663): Մինչդեռ *կուռն* բառը օրինաչափորեն կարող էր ծագել *skōr-s-no- նախաձևից:¹² Մանավանդ որ կան *ճուռն* և *ճիւ* բառերը՝ «1. թև, 2. ոտք» իմաստներով: Մի կարևոր հանգամանք էլ այն է, որ ունենք *կ-ճ* անցման ևս մի քանի դեպք՝ հմմտ. *ճուռճուռ* – *կուռկուռ* «հնդկահավ» (Մալխ., 3, 225, 2, 484), *ճուռիկ* – *կուռիկ* «կավե փոքր աման» (ՀԼԲԲ, 3, 424), *ճայթել* – *կայթել* «ցատկոտել, թռչկոտել» (ՀՄԲ, 3, 181): Այսինքն՝ *կուռն* և *ճուռն* բառերը ծագումով նույնական են՝ որպես միևնույն արմատի սկզբնահնչյունի հերթագայությամբ տարբերակներ:

ճուռճուռ (*ճուրճուր*, *կուռկուռ*) «1. հնդկահավ, 2. վախկոտ փոքր թռչուն» դեպքում ունենք կրկնավոր կազմություն, որի արմատը նույնն է, ինչ *ճուռ(ն)* (*կուռն*) բառինը՝ «թև» իմաստով: Այսինքն՝ *ճուռճուռ* (*կուռկուռ*) տառացի նշանակում է «թևավոր, թռչուն»:¹³ *ճուռ* (*կուռ*, *ճուր*) արմատը նաև «փոքր, հատված, կտրված» իմաստն ունի ոչ միայն *ճուռճուռ* (*կուռկուռ*) դեպքում, այլև *ճուռնիկ* «զինու գլանաձև կավե փոքր բաժակ» (Մալխ., 3, 225), *ճուռիկ* (*կուռիկ*) «կավե փոքր աման» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուռիկ* «կարճ մարդ» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուրիկ* «փոքր դանակ» (ՀԼԲԲ, 3, 425), *ճուռա(յ)* «փոքր սրինգ» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուռեկ* «պոչատ հավ» (Մալխ., 3, 225), *ճուռճիկ* «անթև բաճկոն» (Մալխ., 3, 225), *ճուռիկ* «ձագար»¹⁴ (ՀԼԲԲ, 3, 424) բառերում:

Եզրահանգում. Ճ սկզբնահնչյունով հայերեն բառերի ստուգաբանությունների այս շարքը շարունակելի է ոչ միայն այս, այլև հ.-ե. ուրիշ արմատների առնչությամբ: Սակայն տեղի սղության պատճառով առայժմ սահմանափակվում ենք այսքանով:

Այսպիսով եզրակացնում ենք, որ հայերենի ճ սկզբնահնչյունը մի շարք դեպքերում կարող է ծագած լինել հ.-ե. *sk'h նախաձևից, որ բաղկացած է շար-

¹² Այս բառի «թիկունք» իմաստի զարգացումն է *կոթունք* (*կոթնել*) «կոնակ» <*skōr-t-no- բառը:

¹³ Նույն կառուցվածքով ևս երեք բառ կա՝ «հնդկահավ» նշանակությամբ՝ *ճուռճու* (Մալխ. 3, 205), որը թերևս վերոհիշյալ *ճիւ* «թև» արմատի ձայնդարձային տարբերակի կրկնավորն է (թեև Մտ. Մալխասյանը համարել է բնաձայնություն), *կուլկուլ* (ՀԼԶԲ, 393) և *քելքել* (Մալխ. 4, 568), որոնք թերևս *կուռկուռ*-ի բարբառային տարբերակներ են: Նույն նշանակությամբ կան նաև *ճուրկ* (Մալխ. 3, 221), *ճուլուխ* (ՀԼԶԲ, 393) բառերը, որոնց *ճուլ/ճուլ* արմատը կարելի է համադրել *կուլկուլ*-ի արմատին (ինչպես վերոհիշյալ *կուռ* – *ճուռ* լծորդության դեպքում):

¹⁴ Ձագարը ըստ էության ծայրը հատած կոնն է:

ծուն s-ից և քմայնացած ու շնչեղացած k-ից: Այդ վարկածի հիման վրա ստուգաբանված են ձեռք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, ճողփել, ճողոպրել, ճողոպուր, ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ, ճուռն, ճուռճուռ բառերը:

Հ ա մ ա ռ ո յ ա գ ռ ո լ թ յ ո ն ն Ե Ր

- ՀԱԲ – Աճառյան Հ.Հ., *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Եր., 1971-1979:
- ԼՔՀԼ – Աճառյան Հ.Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Եր., 1971:
- ՀԼՀԲ – Սուքիասյան Ա.Ս., *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Եր., 1967:
- ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Ե, Եր., 2001-2012:
- Մալխ. – Մալխասեանց Ա.Ս., *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Եր., 1944-1945
- ՀՄԲ – Զահուկյան Գ. Բ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, Եր., 2010:
- ՀԼՊ ՆԺ – Զահուկյան Գ.Բ., *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:
- ՎԲԱ – *Wiktionary* (<https://en.wiktionary.org/wiki>) (մարտ – մայիս, 2019).
- ՎԲՌ – *Викисловарь* (<https://ru.wiktionary.org/wiki>) (մարտ – մայիս, 2019).
- Նիկ. – *Nikolaev S., Database of Indo-European etymology* / <http://starling.rinet.ru/cgi-bin/responscgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first> (մարտ – մայիս, 2019).
- Պոկ. – *Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 959 / <http://dnghu.org/indoeuropean.html> (մարտ – մայիս, 2019).
- Աղ. – Աղայան Է.Բ., *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ* Եր., 1974:
- Զաք.-1 – Զաքարյան Հ.Լ., *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն // «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողովի (Վանաձոր) գիտական նյութերի ժողովածու*, Եր., ԱԶ «Արման Ասմանգուլյան», 2016, էջ 87-91:
- Զաք.-2 – Զաքարյան Հ.Լ., *Խխունջ, քրքիր, կոպիտ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն // «Արեղյանական ընթերցումներ - 2» հանրապետական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու*, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93:
- Զաք.-3 – Զաքարյան Հ. Լ., *Ծ սկզբնահնչունով մի քանի բառերի ստուգաբանություն // «Զահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու)*, Եր., «Գիտություն», 2019, էջ 35-45:

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ, С НАЧАЛЬНЫМ ЗВУКОМ Կ

Закарян О. Л.

Ключевые слова: армянский язык, этимология, праиндоевропейский язык, корень, дериват, детерминатив, чередование, корневые варианты, *s-mobile*, начальный звук

В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: ձեռք

"щель" <*sk'he-l- <*sek- "резать, раскалывать", ճիւղ "ветвь" <*sk'heu-l-, ճաղ "спица" <*sk'hə-l-, ճղել "порвать" <*sk'hē-l-, ճղնալի "удрать" <*ճղնալ-նւր <*sk'holo-b- <*sk'ho-l-, ճւր "трещина" <*sk'hə-k-, ճախ "хворост" <*sk'hə-kh-, ճի "1. часть, 2. рука, 3. нога, 4. стебель, 5. птица" <*sk'hē-p-, ճլնն "1. рука, 2. нога" <*sk'hōr-s-no- и т. д.

ETYMOLOGY OF SOME ARMENIAN WORDS WITH THE INITIAL SOUND Ճ

Zakaryan H.L.

Key words: *the Armenian language, etymology, Protoindoeuropean, root, derivative, determinative, vowel gradation, root variants, s-mobile, initial sound.*

The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: ճեղք "cleft, slit" <*sk'he-l- <*sek- "to cut, to split", ճիւղ "branch" <*sk'heu-l-, ճաղ "spoke" <*sk'hə-l-, ճղել "to rupture" <*sk'hē-l-, ճղնալի "to run away, scoot, lam" <*ճղնալ-նւր <*sk'holo-b- <*sk'ho-l-, ճւր "crack" <*sk'hə-k-, ճախ "brushwood" <*sk'hə-kh-, ճի "1. piece, 2. forearm, 3. foot, 4. stalk, 5. bird" <*sk'hē-p-, ճլնն "1. forearm, 2. foot" <*sk'hōr-s-no- etc.

References

1. **Aghayan E.B.**, Baraqnnakan yev stugabanakan hetazotuthyunner, Yerevan, HH GA hrat., 1974 (in Armenian).
2. **Atsharyan H.H.**, Hayeren armatakan bararan, hh. 1-4, Ye., Yerevan, PH hrat., 1971-1979 (in Armenian).
3. **Atsharyan H.H.**, Liakatar qerakanuthyun hayoc lezvi, h. 6, Yerevan, HH GA hrat., 1971 (in Armenian).
4. Hayoc lezvi barbarayin bararan, hh. A-E, Yerevan, «Gituthyun», 2001-2012 (in Armenian).
5. **Jahukyan G.B.**, Hayeren stugabanakan bararan, Yerevan, «Asoghik», 2010 (in Armenian).
6. **Jahukyan G.B.**, Hayoc lezvi patmuthyun. Nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, HH GA hrat., 1987 (in Armenian).
7. **Jaukyan G.B.**, Ocherki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika, Yerevan, Izd-vo AN Arm. SSR, 1967 (in Russian).
8. Makayev E.A., Struktura slova v indoyevropeyskikh i germanskikh yazikakh. M., "Nauka", 1970 (in Russian).

9. **Malkhaseanc S.S.**, Hayeren bacatrankan bararan, hh. 1-4, Yerevan., HSSR pet. hrat., 1944-1945 (**in Armenian**).
10. **Simonyan N.M.**, Stugabanakan ditarkumner // «Banber Yerevani hamalsarani: banasiruthyun», 2016, hm. 1, ej 26-32 (**in Armenian**).
11. **Suqiasyan A.M.**, Hayoc lezvi homanishneri bararan, Yerevan, HH GA hrat., 1967 (**in Armenian**).
12. **Szemerényi O.**, Vvedenie v sravnitelnoe yazikoznaniye. M., “Progress”, 1980 (**in Russian**).
13. Vikislovar (<https://ru.wiktionary.org/wiki>) (**in Russian**).
14. **Zakaryan H.L.**, *Karitsh, kartsh, kirtsh* yev mi qani ayl bareri stugabanuthyun // «Lezun yev grakanuthyun@ mijmshakuthayin haghordakuthyan hamateqstum» IV mijazgayin gitazhoghovi (Vanadzor) gitakan nyutheri zhoghovatsu, Yerevan, ADz «Arman Asmangulyan», 2016, ej 87-91 (**in Armenian**).
15. **Zakaryan H.L.**, *Khkhunj, qraqir, kopit* yev mi qani ayl bareri stugabanuthyun // «Abeghyanakan @nthercumner - 2» hanrapetakan gitakan nstashrjani hodvatsneri zhoghovatsu, Yerevan, YePH hrat., 2018, ej 79-93 (**in Armenian**).
16. **Zakaryan H.L.**, *TS skzbnahnchyunov* mi qani bareri stugabanuthyun // «Jahukyanakan @ntherthsumner» (gitakan hodvatsneri zhoghovatsu), Yerevan, «Gituthyun», 2019, ej 35-45 (**in Armenian**).

Ընդունվել է՝ 04.10. 2019
Գրախոսվել է՝ 31.10.2019
Հանձնվել է տպ.՝ 20.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննես ՉԱՔԱՐՅԱՆ՝ բան.գիտ.թեկնածու, դոցենտ,

«Տաթև» գիտակրթական համալիր, էլ. փոստ՝ hovzakaryan@yahoo.com,